№ 139 ՇԱԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 3 — 1904 — ՇԱԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 3 № 139

ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
ՏԷԼԷՖՕՆ № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
ՏԷԼԷՖՕՆ № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դաշիչաօի շուրջը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Մեր պատասխանը «Շարգը Ռուսին». Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Նամակ Իտալիայից։

ԴԱՇԻՉԱՕԻ ՇՈՒՐՋԸ

Հեռագիրները հաղորդեցին, որ եապոնացիները գրաւեցին Գայչժօու երկաթուղային կայարանը և շարժվում են մի կողմից դէպի հեռաւոր երկաթուղային կայարանը Դաշիչաօ, իսկ միւս կողմից դէպի Ինկօու։ Գայչժօուի մօտ եղած ընդհարումների մասին դեռ չը կան ամբրամսն տեղեկութիւններ, իսկ ինչ վերաբերում է պատերազմական բեմի դիրքերին (տես Н. В.), կարող ենք առաջ բերել հետևեալը։

Գայչժօուից կամ Գայպինից մի ծովափեայ ճանապարհ, մօտ 40 վերստ երկարութեամբ, գնում է դէպի Ինկօու։ Այդ ճանապարհը մեծ նշանակութիւն ունի, սակայն անձրևների ժամանակ նա հեղեղվում է և դառնում է դժուարանցանելի։ Գայչժօուից դէպի հիւսիս մի քանի վերստ հեռաւորութեան վրա, երկաթուղու գծի և Սեաօխուցզեապու գիւղի միջև սկվում է մեծ բլուրների մի շղթայ, որ ձգվում է երկաթուղու աջ կողմով 3—10 վերստ հեռու գծից։ Այդ բլուրները կարող են ծառայել իբրև փոքր ի շատէ բաւարար պատերազմական դիրքեր դիմադրութիւններ ցոյց տալու հակառակորդի զօրքին արևելքից և հարաւարևելքից։ Եապոնացիները, որպէս զի կարողանան վերցնել Դաշիչաօ կայարանը, պէտք է առաջ շարժվեն երկու ուղղութեամբ՝ կամ Գայչժօուից և կամ Զապանլինեան լեռնանցքից դէպի այդ կէտը։

Դաշիչաօ կայարանը Գայչժօուից հեռու է 27 վերստ տարածութեամբ։ Դաշիչաօն իր դիրքով աւելի կարևոր պատերազմական կէտ է, քան Գայչժօուն, որովհետև այդտեղ միանում են Ինկօուից եկող երկաթուղիական ճիւղը մանջուրական երկաթուղու գծի հետ։ Ինկօուն իրանց ձեռքում ամուր պահելու համար եապոնացիները պարտաւոր են անպահովել իրանց Դաշիչաօի կողմից, որովհետև այդտեղից ռուսները կարող են սպառնական յարձակումներ գործել Ինկօուի շրջակայքի, կամ Լաօխէ գետի աւազանի վրա։

Ըստ երևոյթին, ռուսական բանակը չէ ցանկացել առանձին յամառութեամբ պաշտպանել Գայչժօուն, շտապելով դէպի Դաշիչաօ, որ աւելի կարևոր կէտ է, քան առաջինը։ Սակայն պատերազմական հանգամանքները կարող են թելադրել, որ ռուսական զօրքերը Դաշիչաօն էլ ժամանակաւորապէս թողնեն ռազմագիտական նկատումներով։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Վայել է՞ թէ անվայել իրան յարգող գրողին ուշխատակցել մամուլի այնպիսի օրգանի մէջ, որը չէ համապատասխանում իր ուղղութեան։

Ահա մի հարց, որը, ըստ երևոյթին, շատ պարզ է լուծել, որի մասին միայն մի պատասխան կարող էր լինել—ոչ, վայել չէ, բայց այնու ամենայնիւ դեռ լուծված չէ, և նորից ծագել է ռուսաց մամուլի մէջ։ Իսկ ծագել է հռչակաւոր ռուս փիլիսոփայ Լև Տոլստոյի ասած մի քանի խօսքերի առիթով։

Մոսկվայում կան մի քանի փողոցային թերթեր, որոնց թւին պատկանում է «Московскій Листокъ»։ Ի՞նչ է նշանակում փողոցային թերթ։ Դա այն թերթն է, որի համար տպագրական խօսքը միայն միջոց է՝ էժան փառք ձեռք բերելու և... մանաւանդ մեծ փող դիզելու. այդ նպատակին հասնելու համար փողոցային թերթը շօյում, փայփայում է ամբոխի ստոր բնազդները. փոխանակ նրան բարձրացնելու, ինքն իջնում է մինչև նրա ստորութիւնը, իրան լաւ է զգում նեխած, ապականված մթնոլորտում, բորբոքում է իր ընթերցողի մէջ էժան հայրենասիրութեան և շովինիզմի գաղափարի շովինիզմի ոգին։ Փողոցային թերթը յարմարվում է ամբոխի ճաշակին. գիտէ բռնել բարակ դամարից, ինչպէս ասում են և այդ պատճառով էլ սաստիկ տարածվում է ստորին ժողովրդի ու առօրեայ կեանքով ապրող հասարակութեան մէջ։ Եւ մինչ լուրջ, ազնիւ ու շիտակ ուղղութեան լրագիրը իր բաժանորդները հարիւրներով է հաշվում, փողոցային թերթը հազարներով է հաշվում։

Կարող է ազնիւ, շիտակ գրողը, վիպասանը, հրապարակախօսը մասնակցել այդպիսի թերթին, պէտք է՞ նա մասնակցէ։ Չէ կարող և չը պէտք է մասնակցէ—ահա ներքին համոզման թելադրութիւնը։ Բայց այլ կարծիքի է մեծ բարոյախօս փիլիսոփայ Տոլստոյը։ Նա ասում է, որ պէտք է մասնակցէ։

Այս պատասխանը զարմանալի է թվում, չէ՞. սակայն, նա միայն ցոյց է տալիս, որ մեծ գրողը այդտեղ ևս հաւատարիմ է մնացել իր համոզմունքներին և քարոզած բարոյագիտութեան։

Տոլստոյի համար ժողովրդից, ամբոխից բարձր բան չը կայ։ Ուստի և ով աշխատում է ժողովրդի համար, նրա բարոյական և մտաւոր զարգացման համար, նա կատարում է ամենամեծ գործը։ Եւ ճշմարիտ, կայ աւելի մեծ, աւելի վեհ գործ, քան աշխատել խաւարի մէջ խարխափող ամբոխի, տգէտ ժողովրդի համար։ Քանի որ այդ խաւար ամբոխը, այդ թշուառ ժողովուրդը կարդում է «Московскій Листокъ», մտածում է Տոլստոյ, ինչու ես չը գնամ այդտեղ, ինչու չը գրեմ այդ թերթի մէջ։ «Իմ մասնակցութիւնը այդ թերթի մէջ կը գրաւէ և ուրիշ գրողներին, և փողոցային թերթը կը դառնայ աւելի մաքրասէր, իսկ փողոցը կը ստիպվի մտածել մեր մասին։»

Ուրեմն. Տոլստոյը խորհուրդ է տալիս ազնիւ գրողներին մասնակցել փողոցային թերթին, որպէս զի այդ թերթը այլ ևս փողոցային չը դառնայ և ոչ թէ նա, առ հասարակ խորհուրդ է տալիս, որ իրանց յարգը և պատիւը ճանաչող գրողները աշխատակցեն փողոցային թերթերին, ինչպէս մտածում են մի քանի լրագիրներ։ Չէ՞ որ երբ ազնիւ գրողները մասնակցեն փողոցային թերթերին, նրանք այլ ևս փողոցային չեն մնայ և կը դառնան մամուլի լուրջ, ազնիւ, շիտակ օրգաններ։ Փողոցային թերթը հէնց նրանով է փողոցային, որ ինքն ուզում է փողոցային մնալ, ուրեմն տեղ չէ տալիս, չէ ընդունում ազնիւ գրողներին։ Եւ ազնիւ, շիտակ գրողները երբէք չեն կարող ու չը պէտք է մասնակցեն մի օրգանի, որ ուզում է փողոցային մնալ։ Միթէ Միխայլովսկին, Շչէդրինը կարող էին աշխատակցել «Моск. Вѣдомости» կամ «Рус. Вѣстникъ»-ի մէջ։ Միթէ իրան փոքր ի շատէ յարգող հայ գրողը, հրապարակախօսը կարող է աշխատակցել մի փողոցային թերթում։ Լոյսը միայն կարող է ուրախ խաւարի հետ և ոչ միանալ նրա հետ. կեղտոտութիւնը չէ կարող մաքրութեան հետ միասին ապրել։ Ներողամտութիւնը վատ յատկութիւն չէ, բայց ամենանեղողութիւնը՝ նշան է միայն բարոյական հասկացողութիւնների բթացման։

Փողոցային թերթի յատկութեամբ պէտք է բացատրել և այն հարցը, որ յարուցել է Կիէվի մի լրագիր, ասելով, թէ դաւանանք է այն ռուս բժիշկը, որը գերի ընկնելով եապոնացիների ձեռքը, կը սկսէ բժշկել եապոնացի վիրաւորներին։ Ինչու, տրամաբանում են փողոցային թերթերը, որոշ ուղղութեան գրողը չը պէտք է մասնակցէ իր ուղղութեան հակառակ օրգանում, իսկ ռուս բժիշկը պէտք է բժշկէ իր թշնամուն։ Փողոցային թերթերը չեն ուզում հասկանալ, որ այլ է ուղղութիւնը, այլ է մարդասիրութիւնը. բժշկի համար չը կայ ոչ բարեկամ, ոչ թշնամի, ոչ հրէա, ոչ հեթանոս, ոչ հելլէն, կայ միայն տանջվող, ցաւագար մարդ, կայ միայն հիւանդ։ Եւ ի պատիւ ռուսաց մամուլի պէտք է ասել, որ մեծամասնութիւնը բողոք և զայրոյթ յայտնեց Կիէվի շովինիստ թերթի հակամարդկային և անսիրտ ոգու դէմ և միաբերան վկայեց, որ Եապոնիայում գերի ընկած ռուս բժիշկը, բժշկելով և խնամելով եապոնական վիրաւորներին, կատարել է միայն իր պարտաւորութիւնը և եղել է մի բարեխիղճ մարդ, ցոյց տալով, որ ռուս ազնիւ ինտելիգենտը գիտէ զանազանել թշնամուն մարդից, գիտէ որտեղ պէտք է վերջանայ թշնամական գործողութիւնը պատերազմի ժամանակ և սկսէ մարդասիրական գործը։

«Անահիտ» հանդէսը մի տխուր լուր բերեց մեզ այս անգամ. ապրիլի 19-ին, Պարիզում վախճանվել է թոքախտից մի շնորհալի հայ երիտասարդ, որ կոչված էր ոչ միայն հայ, այլ և ֆրանսիական բեմի զարդը լինելը։ Նա արդէն աշակերտ էր ֆրանսիական Կոնսերվատորիայի մէջ, հռչակաւոր դերասան Պոլ Մունէի դասարանում։ Վաղաժամ հայ դերասանի անունն էր Գրիգոր Կիւլպէնկեան, ծնված 1881 թ. ուրեմն մօտ 24 տարեկան։ Նայելով այն գովասանքներին և վկայութիւններին, որ երիտասարդը ստանում էր հռչակաւոր Պոլ Մունէ և Մունէ-Սիւլլի դերասաններից, մենք պէտք է ունենայինք մի երկրորդ Ադամեան, որի հռչակը նոյն իսկ Եւրոպայում պէտք է տարածվէր, բայց անողոք մահը շատ շուտով կտրեց թշուառ երիտասարդի կեանքի թելը։

* * *

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԻՏԱԼԻԱՅԻՑ

Վենետիկ, յուլիսի 6-ին

Այնպիսի ակնահաճոյ և գեղազուարճ ճանապարհ, որպիսին է Վիէննայից դէպի Թրիկոր կամ դէպի Վենետիկ, կարծեմ շատ քիչ կայ ամբողջ Եւրոպայում։ Երկաթուղին կտրում է ամբողջ ժամանակ մեղմ և փափուկ բնութիւնով օժտված կանաչապատ բլուրներ, որոնք շրջապատված են անտառներով և իրանց լանջքի վրա կրում են կամ ամարանոցներ և կամ սիրուն պարտէզներ։ Երբ մտնում ենք Սիմմէրինգ, բնութեան գեղեցկութիւնն ևս աւելի ախորժելի դիրք է ընդունում։ Երևակայեցէք Բորժօմի ձորը, որ ամենից գեղեցիկն է Կովկասի ամարանոցներից, աւելացրէք դրա վրա անհամեմատ աւելի արհեստական կանոնաւորութիւն, բնական և արհեստական յարմարութիւններ, սքանչելի ամարանոցներով և դուք կունենաք Սիմմերինգը։ Ամբողջ ժամերով մարդ չէ կարողանում մի բոպէ աչքը հեռացնել երկաթուղու ճանապարհի երկու կողմի մի գեղեցիկ տեսարաններից, որոնք տևում են հարիւրաւոր վերստ։

Ճանապարհը՝ Սիմմէրինգից յետոյ մտնում է մի հիանալի հովիտ, որի վրա անկարելի է տեսական ամբողջ կարողութիւնը չը կենտրոնացնել։ Եւ այս հովտի միջից հոսում է Միւրց (Mürz) գետակը, հանդարտ և մաքուր ջրով։ Իր երկու ափերի վրա բարձրանում են Ստիրիայի գեղազուարճ բլուրները՝ անտառներով ծածկված։ Եւ Միւրցը հոսում է անդիտակ այն դերին, որ նա խաղացել է Մակեդոնիայի քրիստոնեաների համար բարեկարգութեան ծրագիր պատրաստելու գործում, անցեալ ամառ, երկու կայսրների տեսակցութեան և որսի ժամանակ...

Բայց օդը վագոնի մէջ բաւական տաք է և մեր ուղեկիցներից մի գերմանացի և մի չէխ միմեանց հետ վիճում են. չէխը պահանջում է, որ մեր կուպէի դուռը բաց պահվի, իսկ գերմանացին հակառակվում է, որովհետև պատուհանը բաց է արդէն և եթէ դուռն էլ բանանք, դրսից օդի հոսանք կը սկսի ասում է, որ վնասակար է։ Երբ չը կարողացան համաձայնել, հայեացքներն ուղղեցին ինձ՝ իմ կարծիքը լսելուն համար. իսկ ես բոլորովին անտարբեր ցոյց տուի ինձ, որով դուռը մնաց փակ, չէխը դուրս եկաւ և գերմանացու հետ մնացինք մենակ։ Մեր վագոնը նախ լիքն էր ճանապարհորդներով, բայց նրանք հետզհետէ դուրս եկան Սիմմերինգ և այլ մերձակայ ամարանոցները, վերջապէս գերմանացին էլ դուրս եկաւ և ես մնացի առանձին։ Քովի կուպէից մի բարձրահասակ պարոն՝ տեսնելով որ ազատ տեղ շատ կար, մտաւ ինձ մօտ իր իրեղէններով և անմիջապէս սկսեց խօսել անգլիերէն։ Զարմանալի են այս պարոնները. աշխարհի ծր երկրումն էլ գտնվեն, միշտ և միայն իրանց լեզուով պիտի խօսեն, պահանջելով որ ամեն տեղ էլ նրանց հասկնան։

Մեր խօսակցութիւնից երևաց, որ նոր ուղեկիցս մի հետաքրքիր անձնաւորութիւն էր։ Նա անգլիացի չէր, այլ ամերիկացի. ոչ մի ուրիշ լեզու բացի անգլիերէնից չը գիտէր և արդէն 6 անգամ ճանապարհորդել էր Եւրոպա։ 7-դ անգամն էր, որ գնում էր Վենետիկ։ Նա տուեց ինձ իր այցետոմսն, որի վրա կարդացի Henry Peel, Նիւ-Եօրկի վաճառական։ Ճանապարհորդութիւնը սկսել էր Լօնդոնից և այնտեղից էլ շոգենաւ պիտի նստէր օգոստոսի մէջ դէպի Ամերիկա։ Պարիզում տոմսակ էր վերցրել, որի համաձայն այլ ևս ոչ մի տեղ ոչ մի երկաթուղային պաշտօնի պէտք չունէր և երբէք նրանցից ոչ մէկին էլ երբէք չէր դիմում։ Այդ տոմսակով նա իրաւունք ունէր ճանապարհորդել Ֆրանսիայի Իտալիայի, Շվէյցարիայի և Գերմանիայի երկաթուղիներով. նա ամեն տեղ ցոյց էր տալիս իր տոմսակը առանց մի խօսքի, կտրում էին նրա տոմսակի տեսարից որոշ մի թերթը և վերջացաւ. նա շարունակում էր։

Առաւօտեան 7½-ին դուրս էինք եկել Վիէննայից. երեկոյեան 6-ին հասանք Պոնտէբա՝ իտալական սահմանագլուխը։—Իտալացի մաքսապետը ներս մտաւ մեր կուպէն քննելու մեր իրերը։ Թէ իմ և թէ ամերիկացու կողմից յայտնեցի թէ ծխախոտ և առհասարակ մաքսի վերաբերեալ բան չունէինք. իտալացին քաղաքավարի կերպով մեզ թողեց հեռացաւ։—5 ժամից յետոյ, այսինքն գիշերը 11-ին մտանք Վենետիկ, անցնելով նախ Campo Formio-ից, ուր՝ ինչպէս յայտնի է, 1797-ին Բոնապարտ դաշնադրութիւն կապեց Աւստրիայի հետ, որի համաձայն Վենետիկի նշանաւոր հասարակապետութիւնը դադարում էր գոյութիւն ունենալուց։

Հարկաւոր է արդեօք նկարագրել Վենետիկը, Ադրիական ծովի թագուհուն։ Ով չէ տեսած կամ գոնէ լսած ու կարդացած այս եզակն քաղաքը, որ կառուցված է ամբողջովին կղզիների վրա և Իտալիայի ցամաքի հետ կապված է մի երկար արհեստական կերպով շինված պարանոցով, որի վրա սահելով երկաթուղին թափանցում է ծովային քաղաքի մէջ։

Հետևելով ամերիկացուն, որ 7-դ անգամն էր գալիս Վենետիկ և շատ էր գովում իր սովորական հիւրանոցը նեղ և ոլորապտոյտ ջրանցքներից անցնելով, Վենետիկեան կառքը այսինքն գոնդոլան մեզ բերաւ Grand Hotel Britania, ուր ելևանում են ամերիկացի և անգլիացի տուրիստները։ Հիւրանոցը գտնվում է քաղաքի գլխաւոր փողոցի այսինքն գլխաւոր ջրանցքի մուտքի մօտ։ Գոնդոլները և

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ «ՇԱՐԳԸ ՌՈՒՍ»-ԻՆ

III

«Շարգը Ռուս» մեր յարգելի պաշտօնակիցը չէ հաւատում, որ աղա Շէյխ Հասան մուշտէիդը այնպիսի «ֆիտվա» (վճիռ) տուած լինի հայերի վերաբերմամբ։ Մի՞թէ նա անարխիստ է, հնչակիստ կամ յեղափոխական,—բացականչում է նա—որ մի ժողովրդի սպանութեան վճիռ տայ։ Այդ խօսքերով, թուրք թերթը նոյն իսկ հերքում է, ուրանում է մահմեդական հոգևորականութեան կողմից ոչ-մահմեդական ժողովուրդների դէմ սպանութեան վճիռներ տալու հնարաւորութիւնը։

Մենք շատ ուրախ կը լինէինք և տրամադիր ենք նոյն իսկ հաւատալու, որ իսկական իսլամ կրօնը, Մահմեդ մարգարէի և Ալի խալիֆայի հիմնած կրօնը այդպիսի հակամարդկային տրամադրութիւններով չէ ներշնչված և իսկական շէրիաթի մէջ չը կան տրամադրութիւններ, ցուցմունքներ ոչ-մուսուլման ժողովուրդները սպանութեան, կոտորածի դատապարտելու. բայց այդպէս լինելով հանդերձ, պատմութիւնը այնտեղ կեցած է ապացուցանելու, որ մահմեդական հոգևորականութիւնը, կամ ծուռ մեկնելով մեծ մարգարէի և խալիֆի քարոզած ժաքերը, կամ կրօնը անձնական, կաստային գձուած շահերի միջոց և առարկայ դարձնելով, սպանութեան, կոտորածի հազարաւոր վճիռներ է տուել ոչ-մուսուլման ժողովուրդների դէմ։ Կրօնը իր անձնական կամ կաստային շահերին ծառայեցնելու ապացոյցներ յաճախ տուել է և տալիս է շիա հոգևորականութիւնը Պարսկաստանում. յիշեցէք Ղազվինի դէպքը 1889-ին, Թաւրիզի դէպքերը 1896-ին և 1902-ին և այժմ ևս Սաբզվարի դէպքը։ Եթէ լաւ քննելու լինենք խռովութիւնների և «իշմանների» պատճառները, մենք կը տեսնենք, որ այդ խռովութիւնները սարքել են այս կամ այն սէյիդը, մօլլան, մուշտէյիդը, որովհետև իրանց վաճառականական, կալուածական և ֆինանսական շահերը ու հաշիւները խոչընդոտների են եղել հանդիպում այս և այն հայ վաճառականի կողմից. շատ քիչ անգամ խռովութիւնների և հայերի կամ հրէաների աւարառութեան կամ սպանութեան դրդիչ պատճառները ներշնչված են եղել զուտ կրօնական ֆանատիկոսութիւնից կամ որ և է կրօնական հարցից։ Նոյնը և Սաբզվարի դէպքը. մի սէյիդ չարվադար (Ջորեպան) հաշի պատճառով վէճ է ունենում մի հայի հետ. փոխանակ դիմելու դատարանին, տեղական մարմնաւոր իշխանութեան, սէյիդները, մի քանի հայերի հետ ունեցած հաշիւները յարդարելու լաւ առիթ համարելով այդ դէպքը, նրան կրօնական կերպարանք են տալիս և սկսում հալածանք քարոզել յանուն կրօնի։ Եւ քրիստոնեաների դէմ իրանց այդ հալածանքը սրբագործելու նպատակով դիմում են մեծ մուշտէիդ աղա Հասան մամաղանցուն և զանազան զրպարտութիւններ բարդելով հայերի վրա, ստանում նրանից կրօնական սանկցիա, ֆիտվա։ Ճիշդ է, ֆիտվայի մէջ ասված է այսպէս. «Եթէ, յիրաւի, հայերի հասցէին լսածներս իրականութիւն լինեն, հայերի հետ առևտուրը, նիստ ու կացը, բնակութիւն տալը հարամ և մինչև անգամ հայի արիւնը ամեն մի իսլամ պարսկի հալալ է»։ Բայց ով պէտք է ստուգէ թէ զրպարտութիւնները իրականութիւն ունեն կամ ոչ. չէ՞ որ սէյիդները չեն թոյլատրում մարմնաւոր իշխանութեան միջամտութիւնը. չէ՞ որ նրանք չեն հպատակում նոյն իսկ կենտրոնական իշխանութեան կարգադրութիւններին. չէ՞ որ ինքն մեծ մուշտէիդ աղա Շէյխ Հասանը բանի տեղ չէ դնում նոյն իսկ Շահին և ստիպում է նրան իր ուխտագնացութեան գալ։ Ամբաստանողներն էլ իրանք են, դատաւորներն էլ։ Վերջապէս, ի՞նչ իրաւունք ունի շիա հոգևորականութիւնը, նոյն իսկ կրօնապետը միջամտել այնպիսի գործերի, որ զուտ քաղաքացիական են, որոնց քննութեան և լուծման համար կոչված են մարմնաւոր իշխանութիւնները։ Եւ պատիւ է բերում արդեօք մի կրօնապետի, մի մեծ մուշտէիդի իր վճռագրի մէջ անուանել քրիստոնեաներին «անմաքուր». պատիւ է բերում նրան արդեօք առանց գործը մանրամասն քննելու, պատասխանատու վճիռ արձակել եթէ նոյն իսկ քրիստոնեան որ և է բանում յանցաւոր գտնված լինէր, իսկ հայի ամբողջ յանցանքը այն է եղել, որ չէ կամեցել սէյիդ Ջորեպանի անարդար պահանջը կատարել, և այդ անարդար պահանջը չը կատարելու համար, նա, անմեղը, ենթարկվել է ֆալախկայի 150 հարուածների, իսկ բոլոր հայերը Սաբզվարում և Խորասանում մատնված են այսօր կոտորեան վտանգի, շնորհիւ մեծ մուշտէյիդի տուած անխոհեմ ֆիտվային։

Թող համաձայնի մեզ հետ «Շարքը Ռուսը», որ մեծ մուշտէյիդ Հաջի շէյխ Հասան մամաղանցու տուած ֆիտվան սաստիկ անխոհեմ քայլ է և արդիւնք անհեռատեսութեան ու ոչ մտածված գործողութեան։ Ճիշդ է, «Շարքը Ռուսը» չէ հաւատում բնաւ, որ մուշտէիդը այդպիսի անխոհեմ քայլ արած լինի և այդ ամենը համարում է զրպարտութիւն «Մշակի» թղթակցի կողմից, սակայն, ցաւ ի սիրտ պէտք է յայտնենք, որ մեր թղթակցի հաղորդածը զուտ ճշմարտութիւն է։

Եւ «Շարքը Ռուսը», եթէ անկեղծօրէն ցանկանում է, ինչպէս մենք հաւատում ենք, որ շիա պարսիկ ժողովուրդը ոտք կոխէ քաղաքակրթութեան, լուսաւորութեան շաւղի վրա, որ նա չը մնայ այն թշուառ, մտաւորապէս, բարոյապէս և տնտեսականապէս թշուառ ժողովուրդը, որպիսին հանդիսանում է նա այսօր, պէտք է նա անկեղծօրէն ցանկանայ, որ շիա հոգևորականութիւնը և մանաւանդ նրա ղեկավար մուշտէիդները չը շեղվեն մարգարէի աւանդած պատուէրներից, չը միջամտեն քաղաքացիական գործերի մէջ և կրօնը իրանց անձնական ու կաստային շահերի պաշտպանութեան օրգան չը դարձնեն։

Նախկին հզօր Իրանի ամբողջ թշուառութիւնը, բարոյական և տնտեսական քայքայումը առաջ է եկել հէնց այն հանգամանքից, որ այդ երկրում հոգևորականութիւնը չափազանց խոշոր դեր է խաղում ու միանգամայն նսեմացնում է քաղաքացիական իշխանութեան հեղինակութիւնն ու կարևորութիւնը։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնակատար Իշխան Զերբեզովը յուլիսի 1-ին ներկայացրեց պ. նահանգապետին քաղաքային խորհրդի յունիսի 28-ի որոշումը—յատկացնել 20,328 ռուբլի գումար քաղաքային միջոցներից քաղաքի սանիտարական պայմանները բարելաւելու և խոլերայի դէմ մրցելու, եթէ նա ոտ դնէ մեր քաղաքը։ Իշխան Զերբեզովը այդ որոշումը ներկայացնելով խնդրում է նահանգապետից հաղորդել, թէ արդեօք որ և է արգելք չը կայ այդ որոշումը գործադրութեան դնել անմիջապէս, առանց սպասելու օրէնքով որոշված 2 շաբաթ ժամանակամիջոցին։ Այդ արտակարգ ծախքը քաղաքային վարչութիւնը մտցրել է 1904 թ-ի բիւդժէի № 1 լրացուցէչ հաշի մէջ, որ և իսկոյն՝ նոյն նիստում հաստատվել է քաղաքային խորհրդի կողմից։

—

Ներկայ տարվայ մայիսի 15-ին մինիստրների կոմիտէի որոշումը Թագաւոր Կայսրը բարեհաճել է Բարձրագոյն հաստատել։ Այդ որոշումը վերաբերում է գերմանական «Նաւթային արդիւնքների Ակցիոներական (անանուն) ընկերութեանը» Ռուսաստանում գործառնութիւններ սկսելուն։ Ընկերութեան նպատակն է Բագու քաղաքում նաւթ մաքրելու գործարան հիմնել և Բաթումում կառուցանել տակառներ և ցիստերներ՝ նաւթ պահելու և արտասահման արտահանելու համար։ Ընկերութեան դրամագլուխն է 3 միլիոն մարկ։ Որքան մենք գիտենք, դա առաջին գերմանական ընկերութիւնն է, որ գործում է Կովկասում։

—

Ռուս-եապոնական պատերազմի պահանջած մեծամեծ ծախքերի պատճառով՝ ֆինանսների մինիստրութեան հաշուեկշռից ի միջի այլոց՝ դուրս է նետված Քութայիսի գանձարանական պալատի շինութեան համար նշանակված 80,000 ռուբլի գումարը։

—

Յունիսի 1-ին Թիֆլիսի դատաստանական պալատում,, դռնփակ՝ քննվում էր Մովսէս Բաղդասարեան Աբրահամեանի վճռաբեկ դատը։ Աբրահամեանին Քութայիսի նահանգական դատարանը դատապարտել էր 10 տարի տաժանակիր աշխատանքի, զրկելով բոլով իրաւունքներից,—որովհեաև նա սպանել էլ Ալեքսանդր Թարխանեանին Բաթումում, անցեալ տարվայ մայիսի 29-ին։ Մեղադրվածի պաշտպանը բողոքել էր նահանգական դատարանի վճռի դէմ, բայց դատաստանական պալատն անցեալ օրը հաստատեց նոյն վճիռը։

—

Պետական բանկը կրկին բաց է թողել 20 միլիոն ռուբլու թուղթ փող։ Այդպիսով՝ յունիսի 23-ի բալանսի համեմատ՝ արդէն դուրս է թողնված 740 ռուբլու թղթադրամ. այն ինչ անցեալ տարի նոյն ժամանակը միայն 630 միլիոն ռուբլու էր հասնում նրա չափը։

—

„Рус. Лис." լրագիրը լսել է, որ օրէնսդրական կարգով արդէն ընդունվել է հրէաներին գիւղերում բնակութիւն հաստատելու իրաւունք տալը, որպէս զի նրանք այնտեղ պարապեն երկրագործութիւնով։

—

Վերջին ժամանակներս Ռուսաստանում չափազանց տարածվել են արտասահմանեան խաղատոմսեր կամ նրանց տոմսերի լոկ խոստումներ (պրոմէս)։ Դրանցից շատերի վրա գրված են լինում—«թոյլատրված ռուս կառավարութիւնից» և այլ այդպիսի բառեր. ֆինանսների մինիստրութիւնը, չուզելով, որ ժողովուրդը՝ գնելով այդ օտարերկրեայ խաղատոմսերը՝ խաբվի ու զրկանքներ կրէ, յայտարարում է հասարակութեան, որ բոլորովին հնարովի է, թէ կառավարութիւնը թոյլատրում է օտարերկրեայ խաղատոմսերի մուտքը Ռուսաստան։ Այդպիսի տոմսակները բացարձակ արգելվում են Ռուսաստանում և նրանց տարածող գործակալները կամ հետապնդվում են քրէական պատասխանատուութեան, կամ մօտերը գտնված բոլոր տոմսակները խլվում է ձեռքերից։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

—

Եապօնացիների հրատարակած պրոկլամացիան՝ չինացիներին։ Եապօնացիները, ինչպէս հաղորդում է «Вѣстникъ Маньчжурской Армій» լրագիրը, հետևեալ պրոկլամացիան են կպցրել Նիւ-Զուանի պատերի վրա չինարէն, որի թարգմանութիւնը առաջ է բերում ռուս լրագիրը. «Սրանով յայտարարվում է տեղական ժողովրդին, որ ռուսները ոյժով գրաւեցին Մանջուրիան և, տարիներով տիրելով, հաստատել են կայաններ, ժողովել են զինուորներ, հարստահարել են բնակիչներին և վերացրել են չինաց պաշտօնեաների իշխանութիւնը։ Առհասարակ, նրանք վարվել են այնպէս, ինչպէս կամեցել են, չը թոյլատրելով ոչ և իցէ միջամտութիւնը։ Նրանք դաւադրութեան մէջ են մտել աւազակների հետ և երկաթուղու պահպանութեան պատրուակով գրաւել են Մանջուրիայի երեք արևելեան նահանգների հողերը։ Որովհետև Մանջուրիան հանդիսանում է Չինաստանի 8-ին հարստութեան նախնիքների հայրենիքը, ուստի չինական գահի պաշտօնեաները և հպատակները ոչ մի կերպով չեն կարող տանել այդ դէպքը։ Եթէ Մանջուրիան ընկնի ռուսների ձեռքը, կարող ենք մենք ասել, թէ Կորէային աւելի քիչ վտանգ է սպառնում։ Մեր ժողովուրդը, Եապօնիան նոյնպէս կապված է Կորէայի հետ, ինչպէս շրթունքը ատամների հետ և մեզ չափազանց կը ճնշէր գործերի այդպիսի դրութիւնը։ Այդ պատճառով Ռուսաց 8-ը սաստիկ զայրոյթ զգաց և հրաման տուեց զօրք ուղարկել։ Ռուսաց ցամաքային և ծովային ոյժերը շարժվեցին դէպի Արևելք։ Եապօնացիները օգուտ քաղեցին իրանց իրաւունքից և կատարեցին իրանց պարտքը, յաղթելով հակառակորդին և կուլելով նրա արշաւանդէմ, ինչ ձևով և արտայայտվէր։ Առաջին անգամ Զէմուլպօի մօտ հակառակորդի պատերազմական նաւերը խորտակվեցին։ Երկրորդ անգամ նրանց նաւերը գրգում էին ընտիր երաժշտական կտորներ, բարկաղօլաներ, օպերային արիաներ և այլն։ Պէտք էր տեսնել, թէ ինչպէս այդ ահագին բազմութիւնը խորին լռութիւն էր պահպանում, երբ լուսեղէն պավիլիոնը կանգ էր առնում որ և է հասարակական հաստատութեան առաջ և սկսում էր երգել։ Տեսարանը անզուգական էր. միայն Վենետիկը կարող էր այդպիսի գիշերային շրջուն ջրային երաժշտական հանդէս ստեղծել։

Վենետիկ իր ամբողջութեամբը հսկայական մի թանգարան է, որի կենտրոնը Ս. Մարկոսի եկեղեցին է իր շուրջը գտնվող դրսական պալատով և այլ բազմաթիւ յիշատակարաններով։ Հրապարակի մի մասը այժմ ցանկապատ է, որովհետև այնտեղ, իր հին տեղի վրա նորից կանգնում են Ս. Մարկոսի նշանաւոր զանգակատունը՝ campanile-ն, որի հիմքը արդէն բարձրացած է։ Վենետիկը մարմարեայ պալատների քաղաք է, որոնք ամենաճոխ տառութեամբ զարդարված են մօզայիկ և ֆրէսկո պատկերներով և արձաններով։ Զանգակատան անկումից յետոյ այժմ ամեն մի հին պալատ, հին յիշատակարան խիստ քննութեան է ենթարկվում և ինչ որ փոքր ինչ կասկածելի է թվում, անմիջապէս ամրացնում են և նորոգում։ Դոժերի սքանչելի պալատում Մեծ Խորհրդի սրահում վար էր առնված Տինտորէտի արքայութեան պատկերը և նրա տեղի պատն էր նորոգվում։ Այս պատկերը՝ ամբողջ աշխարհի ամենամեծ իւղանկարն է և արքայութեան բնակիչների գլուխների մի զարմանալի մեծ բազմութիւն է պատկերացնում։

Զը նայելով որ եղանակը բաւական շոգ է և գիշերն էլ մժղուկներից դժուար է լինում քնել, ամբողջ Վենետիկը լիքն է տուրիստներով, որոնք անընդհատ թափառում են մի եկեղեցուց միւս եկեղեցի, մի նշանաւոր շէնքից միւս շէնքը։ Եկեղեցիները ամենահարուստ ժողովածուներ են իտալական գեղարուեստի արտադրութիւնների։ Վենետիկ իր 150 ջրանցքներով՝ 117 կղզեակների վրա 15000 տուն է կրում, որոնք ալիքների գրկից խլված մօտ 10 վերստ շրջապատ տարածութեան վրա 160000 բնակիչ են պատսպարում։ Միակ քաղաքն, որ երբէք փոշի չը կայ—Վենետիկն է, և այո՛, այն շատ հասկանալի պատճառով, որ փողոցները կամ ջրանցք են և կամ բոլորովին սալայատակ, ոչ մի տեղ հող չի երևում, շրջապատի ծովից ևս աւելի չի կարող գալ։ Փոշիի կողմից Վենետիկը մեր Բագուի կատարեալ հակապատկերն է։

Այստեղ պարտաւորութիւն եմ համարում անկեղծ շնորհակալութիւնս յայտնել գեր. վ. Մխիթարեան հայրերին, որոնք ինչպէս Կ. Պոլսում և Վիեննայում, նոյնպէս և այստեղ, առանձնապէս սիրալիր ընդունելութիւն ցոյց տուին «Մշակի» աշխատակցին։

Սարուխան

փոքրիկ շոգենաւերը շարունակ սահում են ետ ու առաջ, իսկ ճիշդ դիմացի եզերքի վրա բարձրանում է S. Maria della salute գեղեցիկ եկեղեցին։

Յուլիսի 4-ին (ն. տ.), երբ քաղաքը Մխիթարեանց վանատունը և Մուրադ-Ռափայելեան վարժարանը պատելուց յետոյ երեկոյեան դարձայ հիւրանոց, իմ ամերիկացի ուղեկիցս առաջարկեց միասին սեղանակցել։ Հիւրանոցի ընդարձակ ճաշարանը շքեղօրէն զարդարված էր ամերիկական դրօշակներով. բոլոր սեղանները ծածկվել էին գեղեցիկ ծաղիկներով և ամեն մի ծաղկամանի վրա փոքրիկ ամերիկական մետաքսեայ դրօշակներ էին ծածանում. ճաշի menu-ն բաղկացած էր ամերիկացիների սիրած կերակուրներից, որոնք կրում էին Միացեալ-Նահանգների մեծ քաղաքների անունները. ցուցակը տպված էր շքեղ թղթի վրա և ոսկի տառերով հետևեալ վերնագիրն էր կրում—For our american guests, (մեր ամերիկացի հիւրերի համար)։ Բոլոր ամերիկացի և անգլիացի տուրիստները ներս էին մտնում սմոքինիներով իսկ կանայք և օրիորդները պատշաճաւոր հագուստներով. բոլորն էլ կրծքի վրա փոքրիկ ամերիկական դրօշակներ էին կրում կամ այդ դրօշակի գոյներից կազմված մետաքսից հանգոյցներ։—Տեսնելով իմ զարմանքը, իմ նոր ծանօթս բացատրեց, որ այսօր Միացեալ-Նահանգների անկախութեան տարեդարձն էր և ամերիկացիք տօնում են այդ օրը։ Ճաշն անցաւ շատ ուրախ և ի յիշատակ այդ տօնի՝ բոլոր սեղանակիցների հետ ես էլ ինձ հետ վերցրի ծաղկամանների վրա դրված փոքրիկ դրօշակն և ճաշի menu-ն։

Նոյն երեկոյ Վենետիկի երաժշտական ընկերութիւնը, որ նուիրված է Վերդիի անուան, մի սքանչելի գիշերային serենադ էր սարքել որին՝ ուրիշ շատերի հետ ես էլ մասնակցեցի գօնդոլայով։ Մեծ փողոցի՝ այսինքն մեծ ջրանցքի (Canal grande) վրա մի մեծ պավիլիոն էին շինել, որի ատաղձը ամբողջապէս և միմիայն գոյնզգոյն ելեկտրական լամպարներից էր կազմված. ստացված տպաւորութիւնը ֆէէրական էր։ Պավիլիոնի մէջ տեղաւորված էին քաղաքի լաւագոյն քնարածուների օրկէստրները և յայտնի երգչուհիներ և երգիչներ։ Մի փոքրիկ շոգեմակոյկ հանդարտօրէն քալում էր այդ ելէկտրական լոյսի մէջ ողողված շարժուն պավիլիոնը, որին հետևում էին հարիւրաւոր գօնդոլներ, խուռն բազմութեամբ լցված։ Ջրանցքի երկու կողմն էլ, ուր որ քարափ կար, նոյնպէս լի էր ժողովրդով։ Ջրանցքի հոչակաւոր մարմարեայ պալատները, որոնք կամ հասարակական հիմնարկութիւններ են և կամ պանդոկներ և մասնաւոր բնակարաններ, լուսաւորվում էին բենգալեան կրակով, ամեն անգամ, որ լուսեղէն պավիլիոնը մօտենում էր նրանց։ Հանդէսը սկսվեց երեկոյեան ժամը 9-ին և տևեց կէս գիշերից յետոյ մինչև 1-ը։ Օրկէստրի մասնակցութեամբ պավիլիոնում երգում էին ընտիր երաժշտական կտորներ, բարկաղօլաներ, օպերային արիաներ և այլն։ Պէտք էր տեսնել, թէ ինչպէս այդ ահագին բազմութիւնը խորին լռութիւն էր պահպանում, երբ լուսեղէն պավիլիոնը կանգ էր առնում որ և է հասարակական հաստատութեան առաջ և սկսում էր երգել։ Տեսարանը անզուգական էր. միայն Վենետիկը կարող էր այդպիսի գիշերային շրջուն ջրային երաժշտական հանդէս ստեղծել։

ռօրմի նաւերի մեծ մասը Պօրտ-Արթուրում հրկիզվեց։ Այսօր չը կայ և ոչ մի հատ ռուսական դրօշակ ծածանելիս եապօնական ծովի վրա։ Մեր քաջ և խիզախ զինուորներից շատ հազարներ, որոնք կռուում են ինչպէս վագրեր և գայլեր, այնպէս որ ոչ ոք չէ կարող համեմատվել նրանց հետ, գնում են, գեղեցիկ կարգով, մեր թմբուկների հնչիւնների և մեր դրօշակի փայլի ետևից։ Մենք գրեթէ կարող ենք ասել, որ մենք կարող կը լինենք հալածել մեր հակառակորդին մեր առջևից առանց կռուի։ Այժմ մեր զօրքերը մտել են Լեաօի սահմանները, անցնելով Կօրէայով խիստ զինուորական հրամանատարութեան ներքոյ, առանց ամենափոքր թուլութեան։ Մենք միշտ լաւ ենք վարվում մարդկանց հետ, ինչպէս զիջող մայրը վարվում է իր զաւակների հետ։ Այս պրօկլամացիայից դուք, ժողովուրդ, կարող էք հասկանալ և ճանաչել եապօնական կայսրի բարութիւնը։ Շարունակեցէք ձեր ամենօրեայ զբաղմունքները, վախենալու ոչինչ չունէք։ Ամեն անգամ, երբ մեր զօրքերը պէտք կունենան մի բանի—պաշարի, ուտեստի, տաւարի, խոտի և այլն,—դուք անմիջապէս կը տաք նրանց, իսկ մենք կը վճարենք ձեզ արդարութեամբ։ Եթէ մէկը ձեզանից փորձէ տեղեկութիւններ տալ մեր հակառակորդին մեր զօրքերի շարժման մասին, կամ որ և է մի բան անէ մեր աջողութեան խոչընդոտ լինելու, նրա հետ կը վարվենք անխնայ։ (Рус. Вѣд.)

Գերմանական չեզոքութեան խնդիրը։ Գերմանիայի չեզոքութեան խնդիրը ներկայ ռուս-եապօնական պատերազմի ժամանակ խօսակցութեան առարկայ է դարձել։ Մի քանի ժամանակ առաջ յայտնվեց, որ ռուսաց նաւատորմը Պօրտ-Արթուրում մտադիր է գնալ Գերմանիային պատկանող Կիաո-Զաօ նաւահանգիստը և այդտեղ պատսպարվել։ Այդ դէպքում, սկսեցին առարկել եւրօպական մի քանի լրագիրները, եթէ Գերմանիան թոյլ տայ ռուսական նաւատորմին պատսպարվել Կիաոչաուում, նա խախտած կը լինի չեզոքութիւնը։ Դրա դէմ գերմանական լրագիրները յայտնեցին, որ միջազգային օրէնքների հիման վրա ռուսական նաւատորմը կարող է պատսպարվել Կիաո-Զաուում, բաւական է, որ նա զինաթափ լինի։ Այդ առիթով, Եապօնիան հարկաւոր համարեց պաշտօնապէս վստահութիւն յայտնել Գերմանիայի չեզոքութեան մասին, որին գերմանական մամուլը յայտնեց, թէ առիթ չը կայ, որ եապօնական կառավարութիւնը այդպիսի յայտարարութիւն անէր։ Ոչ մի առիթ չը կար կասկածելու Գերմանիայի չեզոքութեան մասին։ Մի և նոյն ժամանակ Բերլինի լրագիրները նորից կրկնում են, թէ ռուսական նաւատորմը կարող է բոլորովին խաբիսկ ձգել օտարազգի նաւահանգստում, ուրեմն նա կարող է մտնել և գերմանական Կիաո-Զաօն։ Եթէ այդ պատահի, ռուսաց նաւատորմի հետ կը վարվեն հաւասարապէս միջազգային իրաւունքի տրամադրութիւններին և այդտեղ խօսք անգամ չէ կարող լինել չեզոքութեան խախտման մասին։ «Berl. Tageblatt» լրագիրը այդ առիթով նկատում է. եթէ ռուսները կամենային հաճոյք պատճառել անգլիացիներին և մտնէին Վէյխայ-Վէյ, այդտեղ էլ նրանք կընդունվէին այնպէս, ինչպէս Կիաո-Զաուում։ (Р. Вѣд.)

Եապօնացիները իրանց կռիւը համեմատում են յունական-պարսկական կռուի հետ։ Բերլինի եապօնական դեսպանատունը հրատարակել է եապօնական մինիստր-նախագահ կոմս Կատցուրի խօսակցութիւնը մի ամերիկական միսիոնէրի հետ։ Այդտեղ կայ և յայտարարութիւն եապօնացիների մարդասիրութեան, արդարասիրութեան, քաղաքակրթութեան բարձր մակերևոյթի մասին և համեմատութիւն ռուս-եապօնական պատերազմի և պարսկա-յունական կռուի մասին։ Բացի դրանից մինիստրը յայտնել է, որ Եապօնիան հրաժարվել է, ըստ երևոյթին, այնպիսի բնական մտքից, ինչպէս դաշնակցութիւնը Չինաստանի հետ, որովհետև նա նախատեսել է, որ Չինաստանում ապստամբութեան բռնկումն անխուսափելի է եւրոպացիներ դէմ։ (Т. А.)

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

1 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Յուլիսի 1-ին ֆինանսների մինիստրի ներկայութեամբ կայացաւ պետական արժէթղթեր պատրաստող էկսպէդիցիային կից տէխնիական դպրոցի շինութեան հիմնադրութիւնը, որ գտնվում է Մեծ Իշխան Թագաժառանգի Օգոստափառ հովանաւորութեան տակ և որը հիմնված է էկսպէդիցիայի կառավարիչ իշխան Բ. Բ. Գոլիցինի նախաձեռնութեամբ։

ՏՈՒԼՕՆ։ Ռուսական «Օրէօլ» նաւի օֆիցէրները ներկայ էին այսօր առաւօտեան բերդապահ զօրքերի զօրահանդէսին։

ԿԼԱՐԷՆՍ։ Նախկին նախագահ Կրիւգէր, որ եկաւ այստեղ մայիսի 11-ին, տկարութիւն զգաց յունիսի 26-ին։ Յունիսի 28-ին բժիշկները որոշեցին թոքերի բորբոքումն։ Հիւանդը գտնվում էր անզգայ դրութեան մէջ։ Կրիւգէր ցանկութիւն յայտնեց թաղված լինել Տրանսվաալում իր կնոջ կողքին։

ՏՕԿԻՕ։ («Ռէյտէր»)։ Լուրերի համեմատ, եապօնացիները գրաւեցին Ինկօու, չը հանդիպելով դիմադրութեան։

ՉԻՖՈՒ։ («Ռէյտէր»)։ Նիւ-Չժուանից ստացված մասնաւոր հաղորդագրութիւնների համեմատ, սպասվող կռիւը տեղի ունեցաւ Գայչժուի և Դաշիչաօի միջև։

ԼԵԱՕԵԱՆ։ Ժամանակաւոր բանակատեղեում ապրող մեր առաջապահ զօրամասերի օֆիցէրները շատ կը ցանկանային ստանալ ռուսական լրագիրներ և ամսագիրներ։ Ռուսաց բոլոր լրագիրների և ամսագիրների խմբագրութիւնները հրաւիրվում են ձրի ուղարկել ճնացած համարները «Вѣстникъ Манджурской Арміи» խմբագրութեան, որը կուղարկէ հաժարները հեռաւոր զօրաբաժիններին, օֆիցէրներին և զինուորներին։

ՉԼԱՏՕՈՒՍՏ։ Ուրալը բաղդաւորված է Թագաւոր Կայսրի Մեծ Իշխան Թագաժառանգի հետ Զլատօուստ գալու պատճառով։ Առաւօտեան 10 ժամ 15 րօպէին ժամանեց Կայսերական գնացքը։ Թագաւոր Կայսրը, դուրս գալով վագօնից Մեծ Իշխան Թագաժառանգի և սվիտայի հետ, լսելով ողջոյնները և ընդունելով աղ ու հացը ու պատգամաւորութիւնները, ողորմած կերպով շնորհակալութիւն յայտնեց և կառքը նստելով, գնաց զօրքերի տեղը։ Թագաւորը թողեց, որ հանդիսաւոր ժարշով անցնեն գնդերը, ապա դուրս եկաւ զօրքի մէջտեղը և ողորմած խօսքերով բարի ճանապարհ մաղթեց զօրքերին դէպի պատերազմ, օրհնելով պատկերներով։

ՈՒՖԱ։ Երեկոյեան 9 ժամին Զլատօուստից Ուֆայի վրայով անցաւ Թագաւոր Կայսրը Մեծ Իշխան Թագաժառանգի հետ միասին, ուղեկցութեամբ սվիտայի անձերի։ Ժողովրդի բազմահազար ամբոխին առանց արգելքի թոյլատրվեց արժանանալ իր Թագաւորին տեսնելու բաղդին։ Թագաւոր Կայսրը, կանգնելով վագօնի պատուհանի մօտ, ողորմածաբար և սիրալիր պատասխանում էր գլուխ տալով ժողովրդական ողջոյններին։

ՍՕՖԻԱ։ (Դիմադրական շրջաններից)։ Ընդհանուր պախարակումն է առաջացնում դինամիտային յանցաւոր փորձը Դէդէագաչ գծի վրա։—Սարաֆով չը գնաց Մակեդոնիա և գտնվում է Սօֆիայում։—Ապստամբների և թիւրքաց զօրքերի միջև Գիւմէնջէի մօտ ընդհարման հետևանքն էր 33 տների ոչնչացումը։ Բաշիբուզուկները կողոպտել են 500,000 ֆրանկի ապրանք։ Բաշիբուզուկները կողոպտում էին յոյն վաճառականների տները։ Պատրիարքարանը վճռեց բողոք յայտնել։—Քաղաքացիական գործակալները պատելու ժամանակ տեսան, որ շատ գիւղերում թիւրքաց իշխանութիւնները, 600 տներ կառուցանելու, փոխանակ, բաւականացան բարակներ շինելով։ Ազգաբնակութեան մեծ մասը առանց պատսպարանի մնաց։

ՎԻԵՆՆԱ։ «Ֆրէմդէնբլատ» նկատում է, որ հարաւային Մակեդոնիայից հակասական տեղեկութիւններ են ստացվում. հաղորդում են մի կողմից մակեդոնական սպասողական գործողութեան եղանակի մասին, իսկ միւս կողմից—հրոսակամբերի դինամիտային փորձերի և ընդհարումների մասին։ Անկասկած մակեդոնական ազգաբնակութիւնը խաղաղ է տրամադրված և նրան գրգռելու համար անհրաժեշտ է ագիտացիա, բայց կարելի է յուսալ, որ ագիտացիան աջողութիւն չի ունենայ։ Անհրաժեշտ է, որ Բ. Դուրը դադարէ արգելքներ յարուցանելու բարենորոգումներ մտցնելու առաջ։ Ժանդարմերիայի մէջ ըէֆօրմների մըտցնելը շարունակվում է։ Երկաթուղիների վրա կատարած յանցաւոր փորձերը նրան չեն խախտի։ Եթէ երկաթուղիների վրա յանցաւոր փորձերը նպատակ ունէին տպաւորութիւն գործել Եւրոպայի վրա, այն ժամանակ դրա հետևանքը կը լինի յանցաւոր փորձ անողների ըստ արժանոյն խիստ դատապարտութիւնը։

Կ. ՊՕԼԻՍ։ Գիւմէնջէի մօտ հրոսակախմբերի հետ ունեցած ընդհարումների ժամանակ, Սալոնիկի վիլայէտում, յունիսի 19-ին հրդեհվեցին և կողոպտվեցին աւելի քան 30 տներ. 110 ընտանիքներ առանց ապաստանի մնացին։ Գլխաւոր տեսուչ Խիլմի-փաշան այդ դէպքերի մասին տեղեկութիւն ստացաւ քաղաքացիական գործակալներից։ Սալոնիկի վալին աշխատում էր պարտկել պատահածը։ Ենիջէ Վարդարի գայմագամը պաշտօնանկ է արված և դատի է ենթարկված։ Գայմագամի պաշտօնատի է ենթարկված։ Գայմագամի պաշտօնատի է ենթարկվելը ճիշդ չէ։ Կողոպուտից և նախկն զեկուցումը ճիշդ չէ։ հրդեհից ՀԷասվածները մեծ մասամբ յոյներ են։ Տիեզերական պատրիարքը վճռեց առաջադրութիւն անել Բ. Դրան։

2 յունիսի

ԳԻԱՆԳՅԶԷ։ («Ռէյտէր»)։ Գնդապետ Եօնգ-խէզբանդ դիմեց տիբէտեան ժողովրդին սի շրջաբերականով, որի մէջ մատնացոյց է անում, թէ անգլիական արշաւախմբի նպատակն է յարձակում գործել Լխասսայի վրա բաւարարութիւն ստանալու անհամապատասխան վերաբերմունքի համար դէպի անգլիական ներկայացուցիչները տիբէտեան իշխանութիւնների կողմից։ Ապա շրջաբերականի մէջ մատնացոյց է անվում, որ իւրաքանչիւր յարձակումն անգլիական զօրքերի վրա խստագոյն կը պատժվի։

ՉԻՖՈՒ։ («Ռէյտէր»)։ Եապօնացիները բռնեցին անգլիական շոգենաւը Չիֆուից դէպի հիւսիս, որովհետև կօնտրաբանդա էր տանում։

ՍԱՄԱՐԱ։ Յուլիսի 1-ին Թագաւոր Կայսրը Մեծ Իշխան Թագաժառանգի հետ ժամանեցին Սամարա կայարանը 10 ժամ 15 րօպէին։ Հեռաւոր Արևելք ուղարկվելիք զօրքերը կարգով կանգնած էին Վօլգայսկայա հրապարակի վրա։ Զօրամասերը տեսնելուց յետոյ, Նորին Մեծութիւնը օրհնեց օֆիցէրներին և զինուորներին պատկերներով։ Հրաժեշտ տալով զօրքերին, Թագաւոր Կայսրը գնաց գթութեան քոյրերի Օլգինսկայա հաստատութիւնը, ուր նախագահուհին, նահանգապետի կինը, աղ ու հաց մատուցեց Թագաւորին, իսկ Տօլստայան—ծաղիկների փունջ։ 2 ժամ 20 րօպէին Արքայական գնացքը մեկնեց Սամարայից։

ՈՒՐԺՈՒՄ։ Յունիսի 29-ին ժամանեց ներքին գործերի մինիստրի օգնական Զինովիէվ զէմստվոյի հիմնարկութիւնները վերաստուգելու համար։

Կ. ՊՕԼԻՍ։ Բ. Դուռը գրաւոր պատասխանեց հայ-լուսաւորչական պատրիարքը Օրմանեանին, որ Մուշում և Սասունում տեղի ունեցած զէպքերի ամբողջ պատասխանատուութիւնը ընկնում է հայերի վրա։ Բ. Դուռը հայերին է վերագրում բոլոր տեղի ունեցած բռնութիւնները և մատնացոյց է անում քաղաքացիական իշխանութիւնների կօրրէկտ գործունէութեան եղանակի վրա։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գեներալ Սախարովի հեռագիրը գլխաւոր շտաբին, յունիսի 30-ից. «Յունիսի 29-ին հարաւային շրջանում փոփոխութիւններ չը կային։ Հակառակորդի խուզարկու խմբակները երևում էին երկաթուղու գծից արևմուտք, բայց մեր խուզարկու խմբերի երևալուն պէս՝ յետ էին քաշվում։ Պոդեսաուլ Գօրբունովի խուզարկու խումբը, որ ուղարկված էր Գայչժուից Ինկօու Լանցիչանով անցնող ափային ճանապարհի հարաւակողմը, պարզեց, որ Տավալգիից մինչև Լանցիչան և աւելի հիւսիս եղած աղահանքերում գտնվում են եապօնական խուզարկուներ, որոնց գլխաւոր ոյժը, մօտ մէկ էսկադրօնաչափ, գտնվում է Լանցիչանի մօտը։ Թշնամու պահապան պահակները գտնվում են Մակունցզուիզի—Զժանգատուն գծից մէկ վերստ հիւսիս մինչև ծովափը։ Պինզարը, Սանգօիմին և Տավալգան գրաւել է երեք տեսակ զօրքերից բաղկացած մի զօրաբաժին։ Նանտախէի գետաբերանում, խուզարկու խումբը տեսել է եապօնական 2 նաւ, որոնցից չինացիների ասելով պաշար են բերում։ Յունիսի լոյս 30-ի գիշերը խաղաղ անցաւ այդ շրջանում։ Առաւօտվանից լսվում էին հրաձգութիւններ Նանտախէի աջ վտակի՝ Ցինսախէ գետի հովտից։ Յունիսի 30-ի առաւօտից եապօնացիներն սկսեցին առաջխաղացութիւն Սիւեան-Դաշիչաօի ուղղութիւնով։ Առաջընթաց մասերում սկսվեց հրաձգութիւն. առաւօտեան ծամը 9-ից հակառակորդի բատարէան, որ գրաւել էր Մունգուի լեռնանցքը՝ Տանչիից 15 վերստ հարաւ-արևելք՝—թնդանօթի կրակ բացեց։ Կէս օրվայ ժամը 2 և 45 րօպէի մօտերը եապօնացիները շարժվեցին դէպի Վէյցէաիւ, ուղարկելով զօրաշղթաներ Կուտիցզիի, Մամուգայի և Կօմիզօուի դէմ։ Վէյցզաիւից հարաւ-արևելք եղած դիրքերից, Տանչիից 10 վերստ հարաւ-արևելք, բատարէան ռմբակոծում էր Զուգիագօուի դիմացի լեռնանցքը։ Իսկ կէսօրվայ ժամը 1-ին եապօնացիների մէկ վաշտ գրաւեց Կաշիգօուն։ Այդ ժամանակ Տաունզաեից հարաւ արևելք եղած բարձունքներից՝ թշնամին միահամուռ կրակ բաց արեց մեր արգելառիթ պահակի վրա։ Խուզարկուները յայտնագործեցին, որ այդ ուղղութեամբ գործում են եապօնական երկու հետևակ գունդ երկու բատարէաներով և երկու երեք էսկադրօններով։ Մի գունդ իր բատարէով կանգնած է Կուանտունլինի մօտ, ուրարէով կանգնած է Կուանտունլինի մօտ, ուրարէով գունդ իր բատարէով բռնել է Կաշիգօու-Վէյձաիւ շրջանը, ունենալով առաջապահ մասերը Մամուգայի մօտ։ Յունիսի 29-ին, արևածագին, երեք կողակ, անցնելով լեռնանցքը դէպի Մուգաիւ, յայտնագործեցին թնդանօթային պատնէշներ, 6 թնդանօթեան լեռնօթային պատնէշներ, հեծելային բատարէա և 11 հետևակ վաշտ, հեծելային բատարէա և 11 հետևակ վաշտ, լաղօրային մասերով առջևից։ Սինգօուից դէպի արևելք ուղարկված խուզարկուները, Տանչիից 23 վերստ հարաւ, նկատեցին եապօնական երկու վաշտ, որոնք դուրս էին եկել հովտից դէպի Խուգեաիւ։ Ցաօ Ցիստունի մօտ եապօնացիների մի վաշտ հրաձգութիւն էր անում մի որսորդային կօմանդայի և հարիւրեակի հետ։ Եապօնացիները համախմբվում են Սեաոհետ։ Եապօնացիները համախմբվում են Սեաոխատանից տանող ճանապարհի վրա Տանչիից 18 վերստ դէպի հարաւ-արևելք։ Տանչիի վրա լեռնանցքները նրանք եռանդուն կերպով մշակում են։ Յունիսի 30-ին, առաւօտից, Կուտեաձիի կողմից լսվեցին թնդանօթաձգութիւններ։ Յունիսի 29-ի լոյս գիշերը մեր խումբը սաստիկ խուզարկութիւններ արեց Դալինեան ուղղութեամբ և յայտնվեց, որ նրա առաջապահ դիրքը Սեաոդուշանի մօտ, հակառակորդը անմիջապէս բռնել է և բաւական նշանաւոր զօրախումբ համախմբել Սուստօձիի մօտ, Դալինեան լեռնանցքի առաջ, գլխաւոր ճանապարհի վրա։ Հեծեալ կամաւորների խուզարկու խումբը Սեաոգուշանից հարաւ շրջապատվեց եապօնական վոշտով, բայց դուրս պրծաւ, կորցնելով մի զինուոր սպանված և երեքը՝ վիրաւորված։ Հարիւրապետ Գօրբունովի խուզարկութեամբ Սինգօուի շրջաններում հաստատվեց հակառակորդի բաւական նշանաւոր զօրախմբի շարժումը Սեախատանից դէպի Մագուիւ։ Պինլինի լեռնանցքում փոփոխութիւններ չը կան։ Հաստատված է գրեթէ բոլոր զօրախմբերի ցուցմունքով, որ խուզարկութիւնների ժամանակ եապօնացիները հանում են չինական շորեր կամ գնում են չինական յարդեայ գըլխարկներ. նկատված է նոյնպէս, որ նրանց առանձին կայանները և պահականոցները դիմակաւորում են իրանց ծառի կտրված ճիւղերով։ Լեաօեանից դէպի արևելք հանգիստ է։ Առաջապահ եապօնական խումբը գտնվում է Տանտէյ գիւղի մօտ, 30 վերստ հարաւ Տխաուանից, 50 վերստ հարաւ-արևելք Լեաօեանից։ Յունիսի 30-ի առաւօտեան հրաձգութիւն տեղի ունեցաւ մեր պահականոցի և եապօնական խուզարկու խմբի հետ, բաղկացած մէկ ու կէս վաշտից կէս էսկադրօնի հետ, Լիդիապուձայի մօտ, էտապային ճանապարհի վրա, Տխակուանից 5 վերստ հեռու։ Մեր կողմից կորուստներ չը կային. եապօնացիներից սպանվեցին և վիրաւորվեցին մօտ 10 հոգի, որոնց թուում մի օֆիցէր, իսկ մի զինուոր գերի ընկաւ։ Հրացանաձիգները գրաւեցին եապօնացիների զէնքերն ու ձիերը։»

2 յուլիսի

ՄՈՒԿԴԷՆ։ Յուլիսի 1-ին (Սեփական թղթակ.)։ Ստացված տեղեկութիւնների համաձայն Պօրտ-Արթուրի մօտ յունիսի 20 և 21-ին մեր զօրքերը պաշտպանողական գծի աջ թևի վրա յարձակողական դիրք բռնեցին, վանեցին եապօնացիների առաջապահ մասերը, գրաւեցին Լունզատանեան հովտի արևելեան ափը և յունիսի 23-ին աջող կռուով գրաւեցին Լանվանտանեան լեռնանցքի վրա տիրող բարձունքը։ Մեր կորուստները աննշան են։ Եապօնացիները այդ օրերում, չինացիների տեղեկութիւններով, ունեցել են սպանված և վիրաւորված մինչև երկու հազար հոգի։ Կարելի է ասել, որ Պօրտ-Արթուրի պաշարման օրից եապօնացիները չեն հասել ոչ մի դրական հետևանքների բերդի շրջանում ամրացրված շրջանի։ Մեր զօրքերի առողջութիւնը և ոգին հիանալի է։

ՏՕԿԻՕ («Ռէյտէր»)։ «Նիսինիսիսեմբուն» լրագիրը հրատարակել է հեռագիրներ Երզօրից յունիսի 30-ին, Խանպօրի ոստիկանական կայարանը հաղորդեց, որ յունիսի լոյս 29-ի գիշերը, 54 մղոն դէպի հիւսիս-արևմուտք Բենկէ հրուանդանից անցան երեք կամ չորս մեծ նաւեր։ Օմվոկիի ոստիկանական կայարանը հաղորդում է, որ երէկ, Օտա քաղաքի նաւակա-

յանում, Բենկէ հրուանդանից դէպի հարաւ, երևացին երկու մեծ պատերազմական նաւեր և չորս ականանաւեր։ Յունիսի 30-ին դիտվեցին չորս ռուսական ականանաւ նաւակայանում Բոյշիրի կղզու մօտ Լապերուզովի նեղուցի վրա։ Եապօնական ծովագնացները խոբին ապշութեամբ խօսում են «Նովիկ» կրեյսերի հրամանատարի գործողութիւնների մասին, որը պատերազմի սկզբից ցոյց տուեց զարմանալի հմտութիւն և քաջութիւն։

ԼՕՆԴՕՆ («Ռէյտէր»)։ Եապօնացիները գրաւեցին Ինկօուն։ Քաղաքում գտնվող 300 ռուսներ կարողացան փախչել լեռնանցքերը։ Ռուսները դեռ յետ են պահում եապօնացիներին Պօրտ-Արտուրից 14 մղոն դէպի հիւսիս։ Ռուսները յուսահատ դիմադրութիւն են ցոյց տալիս։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ
Պետերբուրգի ժամացոյցով
Փակագծի մէջ Թիֆլիսի ժամացոյցով

Պ ո ս տ ա գ ն ա ց ք Բագուից դուրս է գալիս երեկ. 6 ժամ 37 ր. (7 ժ. 35 ր.), հասնում է Թիֆլիս ցերեկ. 12 ժ. 37 ր. (1 ժ. 35 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից ցերեկ. 1 ժ. 24 ր. (2 ժ. 22 ր.), հասնում է Բաթում գիշերվայ 1 ժ. 45 ր. (2 ժ. 43 ր.)։

Մ ա ր դ ա գ ն ա ց ք Բագուից դուրս է գալիս ցերեկվայ 12 ժ. 37 ր. (1 ժ. 35 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտ. 5 ժ. 52 ր. (6 ժ. 50 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից 6 ժ. 29 ր. (7 ժ. 27 ր.), հասնում է Բաթում երեկ. 6 ժ. 53 ր. (7 ժ. 51 ր.)։

Պ օ ս տ ա գ ն ա ց ք Բաթումից դուրս է գալիս առաւօտ. 5 ժ. 6 ր. (6 ժ. 4 ր.), հասնում է Թիֆլիս երեկ. 5 ժ 28 ր. (6 ժ. 26 ր.), Թիֆլիսից դուրս է գալիս 6 ժ. 20 ր. (7 ժ. 18 ր.), հասնում է Բագու ցերեկ. 12 ժ. 10 ր. (1 ժ. 8 ր.)։

Մ ա ր դ ա գ ն ա ց ք Բաթումից դուրս է գալիս առաւօտ. 9 ժ. 45 ր. (10 ժ. 41 ր.), հասնում է Թիֆլիս երեկ. 10 ժ. 35 ր. (11 ժ. 33 ր.), Թիֆլիսից դուրս է գալիս 11 ժ. 10 ր. (12 ժ. 8 ր.), հասնում է Բագու ցերեկ. 3 ժ. 55 ր. (4 ժ. 53 ր.)։

Պ օ ս տ ա գ ն ա ց ք Թիֆլիսից դէպի Երևան դուրս է գալիս գիշեր. 11 ժ. 50 ր. (12 ժ. 48 ր.) հասնում է երեկ. 4 ժ. 32 ր. (5 ժ. 30 ր.)։

Պ օ ս տ ա գ ն ա ց ք Երևանից դուրս է գալիս ցեր. 12 ժ. 14 ր. (1 ժ. 12 ր.), հասնում է Թիֆլիս առ. 5 ժ. 24 ր. (6 ժ. 22 ր.)։

Պ օ ս տ ա գ ն ա ց ք Ալէքսանդրօպոլից դէպի Կարս դուրս է գալիս առ. 10 ժ. 46 ր. (11 ժ. 44 ր.), հասնում է Կարս ցերեկ. 2 ժ. 6 ր. (3 ժ. 4 ր.), Կարսից դուրս է գալիս երեկ. 4 ժ. 12 ր. (5 ժ. 10 ր.), հասնում է Ալէքսանդրօպոլ երեկ. 7. ժ. 12 ր. (8 ժ. 10 ր.)։

Ա ր ա գ գ ն ա ց ք Թիֆլիսից դուրս է գալիս 10 ժամին երեկ. (10 ժ. 58 ր.), հասնում է Բաթում առ. 8 ժ. 19 ր. (9 ժ. 7 ր.)։

Ա ր ա գ գ ն ա ց ք Բաթումից դուրս է գալիս երեկ. 9 ժ. 33 ր. (10 ժ. 31 ր.), հասնում է Թիֆլիս առ 7 ժ. 39 ր. (8 ժ. 37 ր.).

Ա ր ա գ գ ն ա ց Թիֆլիսից դէպի Բագու և Մոսկվա դուրս է գալիս երեքշաբթի օրերը ցերեկ. 5 ժ. 25 ր. (6 ժ. 23 ր.), հասնում է Բագու առ. 6 ժ. 9 ր. (7 ժ. 7 ր.)։

Ա ր ա գ գ ն ա ց ք Բագուից դուրս է գալիս լոյս ուրբաթ գիշեր 12 ժ. 53 ր. (1 ժ. 51 ր.), հասնում է Թիֆլիս ցերեկ. 2 ժ. 2 ր. (3 ժամին)։

Մ ա ր դ ա գ ն ա ց ք Թիֆլիսից դէպի Բօրժոմ դուրս է գալիս երկու անգամ՝ առ. 8 ժ. (8 ժ. 58 ր.) և 2 ժ. 40 ր. (3 ժ. 38 ր.), իսկ Բօրժոմից դէպի Թիֆլիս ցեր. 1 ժ. 8 ր. (2 ժ. 6 ր.) և երեկ. 4 ժ. 8 ր. (5 ժ. 6 ր.)։

ԿՐՕՆԻ ԴԱՄԱԳՐԵՐ
Աշակերտաց համար

		Ր.	Կ.	
1.	Դասատետր կրօնի I տարի	—	25	25% զ.
2.	» » II »	—	20	20% զ.
3.	» » III »	—	30	
4.	Հին-ուխտ (ընդարձակ) .	—	45	
5.	» (համառօտ) .	—	35	
6.	Նոր-ուխտ . . .	—	40	
7.	Գործք առաքելոց . .	—	40	
	Ուսուցչաց համար			
8.	Ուղեցոյց (մեթոդիկայ) հին-ուխտի . . .	1	75	35% զեղչ
9.	Ուղեցոյց (մեթոդիկայ) նոր-ուխտի . . .	2	5	
10.	Ուսուցումն քրիստոնէական կրօնի Դ. . .	1	50	
11.	Ուսուցումն քրիստոնէական կրօնի Ե. . .	—	50	

Ցանկացողները կարող են դիմել հետևեալ հասցէով.

1) Тифлисъ, священнику С. Саакянцъ, Коммерческое училище.
2) » Книжный магазинъ «Гуттенбергъ»
3) » » «Центральный».

—

Դասագրքերիս պահեստը ամառս գտնվում է պ. Ալէքսանդր Ամիրաղեանցի մօտ (Карвансарай Тамамшева мануфактурный магазинъ А. Амирагова).

Ցանկացողները նրանից ևս կարող են պահանջ անել։

Սահակ քահ. Սահակեանց
յ. ա. օ. յլ.—օ. օր-մէջ ս. ա. օ. 18—66

ՔԱՂԱՔԻ ՄՍԻ ԽԱՆՈՒԹՆԵՐԸ

կառավարող Ցանձնաժողովը յայտնում է ի գիտութիւն պ.պ. սպառողներին.

Անասունների քանակութիւնը թոյլ է տալիս Ցանձնաժողովին իջեցնել մսի գները քաղաքի մսի խանութներում ներքևում նշանակված սակագներին։ Քաղաքի մսի խանութները կարող են բաւարարութիւն պատճառել սպառողներին, ինչպէս քանակով, այնպէս էլ որակով։

Ներկայ տարվայ յունիսի 28-ից սկսած Ցանձնաժողովը նշանակել է հետևեալ գները մսի համար.

Սուկի, ֆունտը	18կ.	Երիկամուն. զոյգը	15կ.
Տաւարի միս I	11 »	Կօտլէտ—հատը	4 »
» II	10 »	» օտրիվ.	5 »
» III	8 »	Բիֆշտէքս	20 »
Ոչխարի միս	12 »	Անդրիկօտ	15 »
Գլխի միս	3 »	Շնիցել	10 »
Երիկամ. ճարպ	11 »	Ոչխ. գուսակներ	10 »
Դմակի »	12 »	Մեծած միս առանց խառնուրդի ֆ-ը	16 »
Ուղղ, հատը	10 »	Ոսկը—ֆունտը	2 »
Լեզու »	20—25 »	Լեարդ և ֆայծաղ »	1 »
Սիրտ »	10 »		

Լոյս տեսաւ
ԳԷՈՐԳ ՄԱՂԱԲԵԱՆԻ
ԲԺՇԿԱԿԱՆՈՒԹԻՒՆ և ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ
12 պատկերներով
ԳԻՆՆ Է 25 ԿՕՊԷԿ
Գուժարով գնողների համար առանձին զիջում։
Ցանկացողները թող դիմեն՝ Тифлисъ Армян. базаръ гост. дв. Манташева № 30, М. Магакьяну կամ Թիֆլիսի գրախանութներին։ Ծախվում է նոյն տեղերում հեղինակի «Մայր և երեխայ» գիրքը, գինն է 40 կ.։ (շ. չ.) 3—10

Բ Ժ Ի Շ Կ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Ամառվայ ընթացքում սկսած յունիսի մէկից ընդունում է Ալէքսանդրօպոլում մանաւորապէս սիֆիլիս, մորթու, վեներական և վիրաբուժական ախտ ունեցող հիւանդներին. հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ 12—2 առաւօտեան, 5—6 ժ. երեկոյեան. Պուշկինսկի փողոց (Пушкинская ул. № 59) սեփական տուն, № 59. (շ. չ.)

Ս. Յ. ՄԱՏԻՆԵԱՆՑԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ
(Թիֆլիս, Միքայէլ. կամուրջ)
մեծ քանակութեամբ 100,000 պատկերազարդ
ԲԱՑ ՆԱՄԱԿՆԵՐ
Պարիզից և այլ արտասահմանեան յայտնի ֆաբրիկաներից, արժողութեամբ 2, 3, 5, 8, 10 կօպ. և աւելի թանգ.։ Նորութիւններ ստացվում են անընդհատ։ Զանազան տեսակների թիւն 10 հազարից անցնում է։
Թիֆլիսի և այլ Կովկասեան տեսարաններ և տիպեր մօտ . . . . 300 տես.
Ռուս. և հայոց դերաս. և դերասանուհ. 800 »
Գեղեցկուհիներ, երեխ., զան. տիպ. » 2000 »
Ծաղիկներ, տեսար., կենդանիներ » 1500 »
Հոչ. մուզեումների պատ. կոպիներ» 300 »
Պատերազմական դաշտից նաւեր, գեներալներ և այլն » 200 »
և այլն, և այլն, և այլն։
Գումարով գնողներին յայտնի զիջումով։
Պատուէրները կատարվում են անյապաղ վերադիր վճարով։ (հ. շ.) 8—10

Լոյս տեսաւ
Ս. Մ. ԾՈՅԻԿԵԱՆԻ
«ՅԱՐԱԾՈՒԱԾ ԱԽՏԸ»
Գինն է 3 կօպէկ։
Դիմել Баку, Торговая ул. Ашоту Барутчьянъ. 2—3

Լոյս է տեսել
«ՋԻՒԱՆՈՒ ՔՆԱՐԸ»
նոր հրատարակութեան երկրորդ հատորը
(հեղինակի պատկերով)
Գինն է 50 կօպէկ։
Առաջին հատորը (50 կ.) այնպէս էլ այս և հետևեալ գրքերը ցանկացողները պէտք է դիմեն Թիֆլիսում յայտնի գրավաճառանոցները և հեղինակին (Аргутинская ул. № 60)։
Մասուլի տակ է երրորդ հատորը։ Բաժանորդագրութիւնը փակված է։
Խնդրում ենք մեր Թիֆլիսի բաժանորդներին իրանց գրքերն ստանալ «Գուտտէնբէրգ» գրավաճառանոցից, ցոյց տալով անդորրագրերը։ 10—10

Լոյս տեսաւ
ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ
ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ
Հատոր առաջին. 1865—1871.
ԳԻՆՆ Է 1 ՐՈՒԲԼԻ.
Առաջին հատորի մէջ զետեղված են այն խոշոր ու մանր յօդուածները, որոնք լոյս են տեսել մինչև «Մշակ» լրագրի հրատարակութիւնը։ Այդ յօդուածները վերաբերում են 1865—1871 թուականների շրջանին և տպված են եղել մասամբ «Մեղու Հայաստանի» լրագրում, իսկ մասամբ «Հայկական Աշխարհ» ամսագրում։
Դիմել «Գուttենբերգ» գրախանութը։ 3—25

Մ, խումբ հանակրող ընկերները, ցաւօք սրտի յայտնում են ծանօթներին և բարեկամներին, իրանց սիրելի և անմոռանալի ընկեր՝
ԵՐՈՒԱՆԴ Ա. ԱՂԱՄԻՐԵԱՆԻ
վաղաժամ մահը, որ տեղի է ունեցել հանգուցեալի Աղբուլախից դէպի Թիֆլիս ճանապարհվելիս։ Ամբիծքը շաբաթ օրը, երեկոյեան, իսկ յուղարկաւորութիւնը, վաղը, կիրակի օրը ամսիս 4-ին, առաւօտեան ժամի 11-ին դէպի ս. Գէորգ եկեղեցին։ Թաղումը կը լինի Խօջիվանքի գերեզմանատունը։ 1—1

Գուտտենբերգ գրավաճառանոցում վաճառվում են
«Ինչպէս պահպանվել խօլերայից», (պօստի ծախքով 7 կօպէկ, կարելի է ղրկել 7 կօպէկանոց մարկա, գինն է 5 կ.։
«Բժշկականութիւն և հասարակութիւն», 12 պատկերով բժ. Մաղաքեանի գինն է 25 կ.։
«Բիւրդ Պէկ», Շուտի, հատոր ա. բ. գ. գինն է 85 կ.։
«Շոգենաւի և շոգեկառքի հնարողներ», Ֆուլտօն և Ստեֆենսօն, պատկերազարդ գ. 15 կ.։
«Անմեղ Զոհ», Մէգրէլի, թարգմանութիւն վրացերէնից Ղ. Կ. գ. 5 կ.։
«Հայրենասէր Իտալացին», Մաքս Նորդաու, գերմ. թարգմ. Լ. Բաբայեան գ. 5 կ.։
«Արտաւազդ» Բ. Յ. Թումանեանի 30 կ.։
«Աստղիկ, Մշոյ Աւանդութիւն», պատկերազարդ, Գ. Բ., գ. 20 կ.։
«Սօնայի Նշանդրէքը» կամ մօցիքուլի վրէժը վօդ. 1 գործ., Յ. Եսայեանի, գ. 15 կ.։
«Աշոտ Երկաթ», պատմ. վէպ, Բ. Այվազեանի գ. 1 ր.։
«Ջիւանու Քնարը», հատոր ա. և բ. գ. 1 ր.։
«Շարժական Այբուբեն», (կարելի է կպցնել կարգօնի և կտրատել) գ. 5 կ.։
Ստացված են, «Հեռաւոր Արևելքի քարտէզներ. Մամօնտովի հրատ.—ծալովի մեծադիր գինն է 35 կ., հրատ. Սիտինի 60 կ., հրատ. Ելենայի 30 կ., հրատ. Բէլիոզովսկու գ. 25 և 5 կ.։
Դիմել. Тифлисъ: Книжный магазинъ „Гуттенбергъ“. 1—3

ՇՂԹԱՑ
Նաւթարդիւնաբերական ընկերութեան ԳՐԱՍԵՆԱԿԸ տեղափոխված է Լերմոնտովսկի և Վելեամինովսկի փողոցների անկիւնը, տուն Խանդալամեանի № 22, մուտքը Լերմոնտովսկի փողոցից։ 3—3

ԲԺՇԿԱՊԵՏ
Գր. Տէր-Գրիգորեանց
ընդունում է հիւանդներին—ներքին (մանաւորապէս կրծքի) և երեխայոց հիւանդութիւններին. ունի բէնտգէնեան կաբինէտ. 154. Միքայէլեան պրոսպէկտ, տելէֆոն 825.
(շ. ե. հ. չ.) 56—105

ՆԵՐԱՐԿՈՒՄՆ ՄԱՏԻԿՈՒ
(INJECTION AU MATICO)

Գրիպոյ և ընկ. դեղագործների թոյլ է տրված Ռուսաստանում։ Այս հեղուկի մէջ շահագործված են պերուանեան Մատիկօ բոյսի յատկութիւնները, մի բոյս, որ զարմանալի կերպով բժշկում է հոնորէյը (սերմնաթափութիւն) և մի քանի տարվայ ընթացքում համաշխարհային հռչակ է ստացել։ Կարճ ժամանակում բուժում է ամենաոչ սերմնաթափութիւնները։
Պարիզ, 8 Rue Vivienne և գլխաւոր դեղատներում։
(2, 17) 7—1


Պրոֆիլոր Ա. ՍԱՐՈՒԽԱՆԵԱՆՑԻ
ԲՕՐՕ-ՆԱՖԹԱԼԱՆ
Նոր նիւթը
Կատարելապէս փչացնում է գլխի թեփը, ամրացնում է մազերը և օգնում մազերի բսնելուն. տալիս է մազերին իր բնական ու հաստատ տեսքը։ Թոյլատրված է բժշկական վարչութիւնից, իբրև ոչ մի ջնասակար նիւթ չը պարունակող։
Պահեստարան Кавказское Товар. торговл. аптек. товарами Тифлисѣ, Баку, Батумѣ, վաճառվում է և Ռուսաստանի դեղատներում և դեղավաճառատներում։
Արժէքն 1 ռուբլի 25 կօպէկ։
(շ. 1 ան.) 6—50

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԵՒ ԿՕՆՏՕՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐԸ Թիֆլիսի առևտրական դպրոցին կից։
(Հինգերորդ տարի)
Կուրսերում ուսանվում են. հաշուապահութիւն, առևտրական թուաբանութիւն, առևտրական գրագրութիւն և առևտրական իրաւունք։ Պարապմունքների սկիզբն է 1904 թ. ի սեպտեմբերի 15-ից։ Դասընթացը տևում է 6 ամսից ոչ պակաս։ Զրաղմունքները երեկոյեան են և շաբաթը 3 անգամ։ Ունկնդիր կարող են լինել երկու սեռի զրազէտ անձեր։
Վճարն է 40 ռուբլի դասընթացի համար։ Թիֆլիսի առևտրական դպրոցի տեսչի անունով խնդիրներ ընդունվում են ամեն օր ժամը 10—1-ը, նոյն դպրոցի գրասենեակում։ 5—5

Կենտրոնական Գրավաճառանոցում վաճառվում են
հետևեալ նոր գրքերը՝
Աղանեան Գ. ա.-ք., Դիւան Հայոց պատմութեան գիրք Զ.—Դաւիթ կաթուղիկոս մասն ա. 1809—2, Թիֆլիս 1904 թ., գ. 4 ր., Գիրք Ե.—Դանիէլ կաթուղիկոս—4 ր., Գիրք Դ.—Ղուկաս կաթուղիկոս—4 ր., Գիրք Գ.—Սիմէօն կաթուղիկոս—7 ռ., Գիրք Ա.—Բ.—Դիւան Հայոց պատմ. 1780—1834, 2 ր.։
Այվազեան Բ., Աշոտ Երկաթ, պատմական վէպ (913—928 թ. Ք.) ա. և բ. մասն, գ. տիպ, Թիֆլիս, 1904 թ. գ. 1 ր.։
Մուրացանի երկասիրութիւններ, հատոր առաջին. Նոյի ագռաւը, Առաքեալը, Խորհրդաւոր միանձնուհի, Թիֆլիս, 1904 թ. գ. 1 ր. 50 կ.։
Ջիւանու քնարը—Լիակատար հաւաքածու, ոտանաւոր և արձակ (հեղինակի պատկերով), Սրուանձտեան Գաբ. եպս., Համով—հոտով, հատոր ա., հեղինակի պատկերով, Թիֆլիս, 1904 թ. գ. 1 ր. 25 կ.։
Պոօշեանց Պ., Հայի խնդիր, վէպ., բ. տիպ, Բագու, 1904 թ. գ. 1 ր. 50 կ.։
Դիմել՝ Тифлисъ, въ Центральную Книжную Торговлю. (շ. շ.) 4—5

Дозволено Цензурою. Тифлисъ, 2-го іюля 1904 г. Տպարան «ՀԵՐՄԷՍ» Типографія «ГЕРМЕСЪ» С. Назарянца, Мих. пр. № 81